ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ԼՃԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

գ.Լճավան,21-րդ փող , թիվ 45 Հեռ.՝ (+37477)008685

Էլ. Փոստ՝ lchavan.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 12-Ն

« 20 » հուլիսի 2021թ

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ 25.05.2021Թ ԼՃԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>>ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 37-րդ կետի պահանջով

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. ա) Համայնքի ղեկավարի 19.07.2021թ թիվ 10 որոշմամբ աշխատակազմի քարտուղարին շնորհվել է իր պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից՝ բարձր դասային աստիճան և ավագանու 20.07.2021թ թիվ 13 որոշմամբ սահմանվել պաշտոնային դրույքաչափի 10% ի չափով հավելավճար:

   բ) Աշխատակազմի քարտուղարի 19.07.2021թ թիվ 1 հրամանով աշխատակազմի համայնքային ծառայողին (աշխատակազմի առաջատար մասնագետ) շնորհվել է իր պաշտոնի անձնագրին համապատասխանող դասային աստիճանից բարձր դասային աստիճան և ավագանու 20.07.2021թ թիվ 13 որոշմամբ սահմանվել է պաշտոնային դրույքաչափի 10% -ի չափով հավելավճար:
2. Այսուհետ համայնքի բյուջեի հետ կապված բոլոր քննարկումները կուղեկցվեն համայնքի ղեկավարի բյուջետային ուղերձով, որտեղ

պետք է հստակ նշված լինի բյուջեի ծախսման ուղղությունները, բյուջեի վարչական և ֆոնդային մասերի, պահուստային ֆոնդի ձևավորման առաջարկվող հատկացումները, բյուջեից ֆինանսավորվող նպատակային ծրագրերի կատարման համար պահանջվող գումարների և առաջարկվող հատկացումների հիմնավորումը, համայնքի բյուջեի միջոցների հաշվին պահպանվող հաստիքների թվաքանակը, աշխատավաձի ֆոնդի մասին տեղեկությունը և ինչպես նաև փաստացի աշխատողների միջին տարեկան թվաքանակի մասին:

3. Համայնքի հնգամյա զարգացման ծրագրում կատարել փոփոխություն և ներառել համայնքի սեփականություն հանդիսացող հողերի կառավարման ամենամյա և հնգամյա պլանները և այն ներկայացնել առաջիկա ավագանու նիստի հաստատման :
4. Այժմ իրականացվում է համայնքի վարչական տարածքում գտնվող գյուղ. նշանակության հողերի գույքագրում և մինչև ս/թ օգոստոս ամսվա վերջը կտրվի հայտարարություն դեռևս չվարձակալված գյուղ. նշանակության հողերի վարձակալության մրցույթի վերաբերյալ:

Որոշումն ընդունվեց՝ Կողմ -4, Դեմ- 0, Ձեռնպահ- 0

Համայնքի ավագանի՝ 1. Կ. Մանուկյան

2. Ն .Սաֆարյան

3. Ջ. Մարտիրոսյան

4. Գ. Տոնոյան

Համայնքի ղեկավար՝ Լ. Գևորգյան

Աշխատակազմի քարտուղար՝ Ս. Հովհաննիսյան